ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15.03.2022թ.
ժամը 11[10]

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 11-ը մարտի 2022թ. ժամը 12[30]-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքները:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ պետի տեղակալ, գնդապետ Ա. Գալստյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԶԲՖԿՇ պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԶԲ բաժնի պետ Ա. Հակոբյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԶԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Շլեպյանը,

Գնումները համակարգող

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ 22-10/5» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար *«Զինվորական մահճակալի»* ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Լ. Թազայան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի, բացառությամբ հետևյալ դեպքի.

ԱՁ Արման Առաքելյանի հայտը **http://www.armeps.am** էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի. էլեկտրոնային հայտին որևէ փաստաթուղթ կցված չէր, հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չի ունեցել, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ որոշեց մերժել վերջինիս հայտը:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.

«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված 1.3) 4-րդ բաժնի (Իրական շահառուների տվյալները) 4.5 ենթաբաժնի (Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)) այունակի 4.5.1. տողում չի նշված Կազմակերպության կանոնադրական կապիտալում *մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ*, ինչպես նաև 4.7 ենթաբաժնի (Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները) այունակի 4.7.1. տողում չի նշված *իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին:*

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 15.03.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.5 **17.03.2022թ.**-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

17.03.2022թ. տեղի ունեցած նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ՁԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Շլեսպյանը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Լ. Թազայան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Նախահաշվային գին ՀՀ դրամ	Ընթացակարգին մասնակցող ընկերությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	գինվորական մահճակալ /էսքիզ 1/	հատ	900	**33,300,000**	1	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	28,395,000	5,679,000	34,074,000

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցն ԱԱՀ վճարող է:

3.4 Քանի որ, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակցի կողմից առաջարկված գինը գերազանցում է պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը 17.03.2022թ.-ին որոշեց կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և **22.03.2022թ. ժամը 11:10-ին** ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) սույն ընթացակարգին հայտ ներկայացրած և հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակցի՝ «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի հետ առաջարկված գների նվազեցման նպատակով վարել բանակցություններ: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ մասնակցին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.5 **22.03.2022թ. ժամը 11:10-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար ծանուցված մասնակցի՝ «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է նոր նվազեցված գնային առաջարկ և գրություն ուղղված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, համաձայն որի վերջինս հայտնել է իր համաձայնությունը նվազեցնել առաջարկված գնային առաջարկը ներքոհիշյալ չափաբաժնի մասով՝ սահմանելով հետևյալ գինը.

1-ին չափաբաժնի մասով առաջարկված 34,074,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամի փոխարեն՝ 33,300,000 (ներառյալ ԱԱՀ-ն) ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով, որ «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն հանդիսանում է սույն ընթացակարգին հայտ ներկայացրած և հրավերի պահանջներին համապատասխան գնահատված միակ մասնակից, և բացի այդ, քանի որ մասնակցի կողմից նոր առաջարկված գինը չի գերազանցում պատվիրատուի՝ տվյալ գնումների համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովը «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Լ. Թազայան)

4.1 **22.03.2022թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Լ. Թազայան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Լ. Թազայան)

6.1 **«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-10/5»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Գալստյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Հակոբյան
Գնահատող	Ա. Շլեպչյան
Գնումները համակարգող	Լ. Թազայան